

կարգի վանահայր վանացն Սաղեանի Տ. Թովմա վարդապետ Բաղդասարեան. Թ. 615:

— Եանուան Տ. Գրիգոր Տ. վարդապետի որով կարգի նա վանահայր ս. Թովմա Առաքելոյ վանացն Ագուլիաց. Թ. 632:

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԳԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

20 ապրիլի. Երևանի Պ. Նահանգապետը Թ. 3064 և 997 գրութիւններով յայտնում է Սինոզին, որ Զանջրուայ ս. Կարապետի վանքը ֆեասուած լինելով երկրաշարժից կործանման վտանգ է սպառնում, և խնդրում է Սինոզի տնօրէնութիւնը: Սինոզը վճռեց գործակալների և գաւառապետների միջոցով յայտնել ժողովրդին, որ մինչև վանքի նորոգութիւնը ուխտագնացութիւնն արգելուած է:

4 մայիսի. Կարուց Հոգեւոր կառավարութիւնը Թ. 24 և 416 գրութիւններով յայտնում է Սինոզին, որ «Տալլար» Աթոռապատկան հոգի կապալառուն պայմանը խախտել է: Սինոզը վճռեց պատուիրել Կարուց Հոգեւոր կառավարութեան նախ յիշեալ կապալառուին հեռացնելով նոր ածուրդ նշանակել ու պայմանը ներկայացնել Սինոզին ի հաստատութիւն: Երկրորդ՝ դատաստանական կարգաւ կապալառուից 1500 ռ. տուգանք ստանալ:

15 մայիսի. Սինոզը լսելով Վրաստանի և Իմերէթի թեմի Կոնսիստորիայի Թ. 1928 յայտարարութիւնը, վճռեց ծանուցանել Ռուսաստանի Հայոց հոգեւոր բոլոր առեաններին, որ հայ քահանաները ըստ խնդրոյ միւս ոչ օրթոդոքս քրիստոնեաների (կաթոլիկների, բողոքականների, ասորիների և հաբէշների) կարող են կատարել նոցա հոգեւոր պէտքերը:

Ռուսաստանի սովետներին օգնող մասնաժողովը ապրիլի 22-ի գրութեամբ խնդրում է Սինոզից օժանդակել իրեն դրամական նւաասաներ ժողովելու գործում և ցոյց տալ թէ որտեղի հայ ժողովուրդը օգնութեան կարիք ունի: Սինոզը վճռեց պատուիրել Ռուսաստանի Հայոց Կոնսիստորիաներին, որ հրաւեր կարգան հայ ժողովրդեան օգնելու անբերութիւնից ֆեասուած Ռուսաստանի ազգաբնա-

կութեանը և հանգանակած գումարները ուղարկեն նշանակեալ հասցէին՝ նոցա քանակութեան մասին տեղեկութիւն տալով Սինոզին:



ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱԺԻՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ.

«Դու ես վիմ, եւ ի վերայ այդ վիմի շինեցից զեկեղեցի իմ, եւ դռամ դռնից զնա մի յաղթանաւսեցնես»:

Մատթ. ԺԶ. 18.



ՍԿԱՅԱԿԱՆ ոսկէ տառերով Հռոմի ս. Պետրոս եկեղեցւոյ՝ քրիստոնէական ամենահոյակապ տաճարի, գմբէթի մէջ արձանագրուած՝ Հռոմէական եկեղեցւոյ նուիրապետական ձգտումների հիմք են կազմում այս խօսքերը. բայց նոքա կարող էին արձանագրուած լինել նաեւ քրիստոնէական բոլոր տաճարների և ամենափոքր մատուռի գմբէթի մէջ, և իւրաքանչիւր եկեղեցւոյ կենդանութեան սկզբունք և գործունէութեան նշանաբան համարուիլ: Այդ հասկանալու համար պէտք է պարզել նախ թէ ինչ կապակցութեան մէջ են ասուած նոքա աւետարանում և ինչ է նոցա բառացի իմաստը:

Փրկչի երկրաւոր կենաց ամենակարեւոր րոպէներէից մէկն էր, երբ այդ հանդիսաւոր խօսքերն արտասանուեցան: Անցել էին Գալիլիայի այն գեղեցիկ օրերը, երբ Նորա քարոզութիւնների թարմ տպաւորութեան ներքոյ՝ ողևորուած ամբողջ հեռեւում և շրջապատում էր Նորան ամեն տեղ. այդ ամբոխի առաջնորդների հետ մի քանի թեթեւ վիճարանութիւններ ունենալուց յետոյ՝ Նա այս անգամ արդէն վճռական կերպով մերժել էր նոցա իրենից և սկիզբը դրել այն թշնամական յարաբերութիւնների որոնց հետեանքը իւր անարգական մահը պէտք է լինէր խաչի վրայ: Նա գիտէր այդ, և մենակ կանգնած